**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ**

**Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին**

***Հոդված 462.1. ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ԿԱՄ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ԿԱՄ ԽՈՒՍԱՓԵԼԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՄՈՒՇ ՏԱԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ԿԱՄ ԽՈՒՍԱՓԵԼԸ***

*1. Զինապարտ քաղաքացու կողմից պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության կամ զորահավաքային զորակոչից կամ վարժական հավաքից խուսափելու հատկանիշներով հարուցված քրեական վարույթի ընթացքում նշանակված առողջական վիճակի հետազոտություն կամ փորձաքննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը, ինչպես նաև նշանակված հետազոտության կամ փորձաքննության շրջանակներում հետազոտման համար նմուշ տալուց հրաժարվելը կամ խուսափելը՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:*

*2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարած քաղաքացին ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մինչդատական վարույթի կամ դատական վարույթի ընթացքում կամավոր անցել է առողջական վիճակի հետազոտություն կամ փորձաքննություն կամ նշանակված հետազոտության կամ փորձաքննության շրջանակներում կամավոր տվել է հետազոտման համար անհրաժեշտ նմուշը:*